1895 ԱՊՐԻԼԻ 23 (5 Մայիսի) ԿԻՐԱԿԻ

45—ՏԱՍՆԵՒՀԱՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 45

1895 ԱՊՐԻԼԻ 23 (5 Մայիսի) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կես տարուանը 6 ռ., 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Հասցէն՝ Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

Redaction de la Revue „Hay. Wienerstadt Universitätsstrasse 4.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԷ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՌԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՔ

XIX-ՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

(ՄԱՍԸ Գ. 1831-1842 թ.)

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ III՝ ԿԱՐԲԵՑԻՈՅ

և

ՊՕԼՕԹԷՆԻԷ

ԳԻՆՆ Է 2 Ռ., ՃԱՆԱՊԱՐՀԱՓԱԽՍՈՎ 2 Ռ. 50 Կ.

Առաջին և երկրորդ հատորները միասին 4 ռ., ճանապարհածախսով 5 ռ.

(10—10)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարդ և պաշտօնեայ։

«Ինտելիգենտ» և ոչ-ինտելիգենտ տանուտէրների խնդիրը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ՝

Ստեփանի գիւղերի նկարագիրը։ Հայաստանում տիրող բնաւորական հարկահանութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Սուլթանի կարգած յանձնաժողովի նիստը։ Մխիթարեանների շարունակութիւնը Անգլիայում։ Հայոց Հայրիկը Մեծ-Սալայում։ Ծխահարկի վերջացնելու դիտաւորութիւն։ Այգեզրդեանի դղրոց Կովկ. նահանգներում։ Ղազարոս Բեբբերեանի կտակը։ Բագուի նահանգի աւագակութիւններն ու սպանութիւնները։ Կովկասի հանքային ջուրը։ Գաղ. գործ. վերարերեալ նահանգ. ատենի վճիռը։ Վիկտոր Հիւգոի բանաստեղծութիւնները ռուսերէն լեզուով։ «Ամուսինների» ներկայացումը։ Մահ պատճառող իրաւլիներ։ «Մշակի» կազմած ծրագիրը «Կովկազի» և «Արարատի» համար։

ՏԱՃԿՍ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Պուլանլիսից։ Լուրեր։

ՖԵԼԻԵՏՕՆ.—«Մուխպիրներ»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴ և ՊԱՇՏՕՆԵԱՅ

Մարդկային իրաւանց ամենամեծ պաշտպանը Քրիստոսն էր. այդ իրաւանց համար էլ Նա թափեց Իւր արիւնը։ «Ահա մարդը —«Ecce Homo» բացականչում էին Նրա խաչի մօտով անցողները, բայց ոչ որ չէր ասում ահա այս ինչ կամ այն ինչ պաշտօնեան. իսկ «Թագաւոր Հրէից» բառերը միայն ծաղրի համար էին գրվում և արտասանվում։ Նա, որ եկել էր «ոչ թէ բակել զօրէնս, այլ լցուցանել զնոսա», դիտմամբ ոչ մի պաշտօն չվերցրեց, որովհետև պաշտօնը կապուած է օրէնքի, հասարակական կեանքի պատասխանատուութեան հետ և պաշտօնեային կանգում է բոլորովին որոշ պարտաւորութեանց հետ, որոնցից ոչ մի կերպով չէ կարելի խոյս տալ։

«Ծուէք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» ասում էր նոյն Քրիստոս, որ մեծատնից պահանջում էր վճառել իւր բոլոր կայքը և գընալ Իր ետևից։ Այդ նոյն Փրկիչը, որ Իրեն խաչելու ժամանակ Իր դահիճների համար աղաչում էր Աստծուն, թէ «զթող նոցա զմեղս իւրեանց, զի ոչ գիտեն զինչ առնեն», նոյն Փրկիչը կանգնեցրեց փարիսեցիներին և ամբոխին, երբ նրանք ուզում էին քար ձգել մի թշուառ կնոջ վրայ։ Այդ բոլորին ևս Նա պաշտօնեայ չէր, բայց ամբոխը գիտել էր Նրա դատին, ուրեմն Նրան առ բոլոր պաշտօնէի գեր էր տուել և Նրա դատաստանն այդ բոլորին այնքան կտրուկ էր, որ ամբոխի ձեռքերը թուլացրեց։ Նա հօ չէր կարող ասել՝ «ուզում էք քարկոծեցէք, բայց յետոյ կըհասկանաք ձեր սխալը»։ Քրիստոսը, որ արհարհում էր փարիսեցիների մոլեռանդութիւնը և մաքսաւորների հետ էր ուտում, Երուսաղէմի տաճարում բարկութիւնից բորբոքուեց և խարազանն առած դուրս արաւ ապաւնեվաճառներին. «տուն իմ տուն Աստուծոյ կոչեսցի, իսկ դուք արարեք զնա այրս աւազակաց» ասելով։ Բայց կրկնում ենք, որ Նա գեռ այն Փրկիչն էր, Որի միակ նշանաբանն էր սէր և ներողամտութիւն, Նա միայն քարոզիչ էր սիրոյ և ճշմարտութեան, ապատ քարոզիչ և ոչ պաշտօնեայ։

Աշխարհի սոսիալական և քաղաքական կեանքը առաջ է բերել պաշտօններն և պաշտօնեաներ։

Մի համայնք, մի ժողովուրդ, մի ազգ իր հասարակական հիմնարկութիւնները, իր իրաւանց զօրագրութիւնը, իր օրէնքների պահպանութեան վրայ հսկելը, այլն այլն, յանձնում է մի որ և է պաշտօնէի և 'ի հարկէ ընդհանրապէս ջանք է լինում որ պաշտօնեան լինի արժանաւոր անձն, բարձր հասարակական մակերևոյթից, բարձր կրքերից, հաստատակամ և ձեռնտաս։ Իւրաքանչիւր պաշտօնեայի մէջ երկու անձ կայ խկասէս.—մարդն ինքը և պաշտօնեան։ Մարդը մնում է նոյնը, իսկ պաշտօնեան կապվում է այն օրէնքների և հատատութիւնների հետ, որոնք իրրև հասարակական ուանդներ յանձնվում են նորան։

Երևակայեցէք մի մարդ, որին հասարակութիւնը կամ պետութիւնը ընտրել է կամ նշանակել է դատաւորի պաշտօնով և ընտրել է իմանալով նախապէս նրա քրիստոնէական բարութիւնը։ Կասկած չկայ որ սիրելի է այն դատաւորը, որ աշխատում է բարոյապէս ազդել իրեն մօտ դատելու բերած գործերի, աւագակների, դատարկապորտների և ուրիշ յանցաւորների վրայ, բայց ինչ կը լինի արդարադատութեան գործը, եթէ բարի դատաւորը այն ատիճանի հասցնի իր բարութիւնը, որ թոյլ տայ դատարանի դահլիճում մի սրիկայի մօտենալ իրեն և հրապարակաւ հայհոյել, քրքիջ բարձրացնել, ծաղրել օրէնքը և դատաւորին...

Վերցնենք հասարակական հանգստութեան վրայ հսկող մի պաշտօնեայ, նոյն իսկ մի ոստիկան։ Դրան ընտրել են կամ նշանակել միայն այն պատճառաւ, որ վերին ատիճանի բարոյական և խաղաղասէր մարդ է, որ յանցաւորների հետ խստութեամբ չէ վարվում, անկաշառ է, արբեցող չէ, հայհոյող չէ։ Բայց ինչ կասէք այդ բարի՝ ոստիկանին, որ երբ տեսնէ թէ իրեն յանձնուած դիւանատան մէջ զոքերը մտել են և իրեն վրայ ծիծաղելով տանում են օրինակրքերը վաճառելու, ինքը միայն բաւականանայ փիլիսոփայական ժպիտով, նոյն իսկ այն ժամանակ, երբ զոքերը իրանց ձեռը իրեն դրպանը ևս կոխեն։

Պաշտօնեան չէ պատկանում իրեն, այլ այն ժողովրդին, որ նրան ընտրել է, և այն օրէնքին, որի գործադրութիւնը նրան է յանձնուած։ Միայն այդ ուղղութեան խստութեամբ հետևելուց յետոյ պաշտօնեան ոչ միայն կարող է, այլ և պարտաւոր է ներողամիտ և բարի լինել։

Սիմէոն վարդապետն ստիպուած էր պատժել ըմբոստ կղերականի յանդուգն վարմունքը. նա թիւրք զապթիների ձեռօք ուղարկեց Տէր-Գէորգին Մշու կրօնական ատեանը։

—Իմ պաշտածը ուղղափառ Իսլամի կրօնն է. այլևս ես չեմ ընդունում այն քառաձև խաչն ու քրիստոնէական աւետարանը՝ որոց անունով սպանում էք զուք այսօր դատապարտել և հալածել ինձ...—գրանք հայ կղերականի վերջին և վճռողական խօսքերն էին։

—Գերապատիւ Հայր, գիտէք որ բաղդախնդիրների և հացկատակների համար սրբութիւն և հաւատ չկայ. Տէր Գէորգը մոլորուած է և անտեղեակ իւր արարմունքին, ուրեմն՝ ըստ աւետարանին՝ «Հայր, թող նոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն...». օրէնքը և թող վերադառնայ իւր ժողովրդան գիրկը, այնտեղ իւր մեղքերը քաւելու և ապաշխարելու համար», յորդորեց Սիմէոն վարդապետը։ Սրտաբեկ և յուսազուրկ առաջնորդը արձանի նման մնացել էր լուռ և անշարժ. նրա ճակատից անցնում էին մթին թուխպերը, կեանքի բոցով վառ աչքերի մէջ կարդացուում էր սրտմտութեան և վրէժառութեան կատաղի ոգին. ուժգին բարախում էր նրա լքուած սիրտը և ամբողջ մարմնով զողում. զողում էր նա, որովհետև չէր կամենում հաւատալ իւր լսելիքին. որովհետև շօշափում էր հայ մարդու և եկեղեցականի փոքրոգութիւնն ու բարոյական ոչնչութիւնը... — ինչ է այս գրութիւնն ու վիճակը, հոգևոր վարչութեան պաշտօնի ու բարոյական ազդեցութիւնը զրօյի արժէք ունի մեզ մօտ...Կաշկանդուած ձեռ ու ոտով մինչ հնարին է պահպանել իշխանութեան և իրաւունքի վրայ նշանակութիւնը պաշտաճաւոր կամ վայելուչ բարձրութեամբ...—յեղեղում էին ներսէս վարդապետի գլխում։

—Անիծեալ լինիս...—երկարատև մտանջութիւնից և սրտատանջութիւնից յետոյ, մրմնջաց նա և թոյլատրեց քահանային գիւղ վերադառնալ հովուելու Քրիստոսի բանաւոր հօտը։ Անտարակոյս եկեղեցու և ազգային իրաւունքի անխախտ պահպանութեան նախանձախնդիրը ներսէս հայր սուրբն այդպիսի նեղոտմամութեամբ չէր վերարերուել դէպի անարժան պաշտօնեան, չէր հանդուրժել, եթէ հանգամանքները փոքր ի շատէ նրա պատասաւոր լինէին, եթէ Փրկչական խաչի նշանակութիւնը այնքան նսեմացած և փոքրացած չլինէր «էէնիչէրիների» ու «քաշիբոզուկների» սիրապետութեան մէջ...

Գ.

1892 թուի համամարակից յետոյ, երկրորդ տարին էր, որ երկիրն էլ իւր անբերրիութեամբ կատարեալ կորուստ էր սպառնում հայ ժողովրդին, որի գոյութեան միակ միջոց՝ սև հողը, արտն ու խոփը, մանգաղն ու գերանդին էր. բոլորում էին շարաբաստիկ տարիները, սակայն նրա խոփն ու գերանդին մնում էին անգործադրելի, գալ և ժանգոտած... Տաճկական կառավարութեան ծանր հարկերն ու հասոյթները, խղճից ու զգացմունքից խլաւ զուրկ՝ քարապակ, ոչ մի պայմանագրութիւն, ոչ մի հանդէս չի կատարուել և շատ տեղ մինչև այժմ էլ չի կատարվում առանց տանուտէրի, որ իրրև գիւղի նահապետական սիրոյ և հպարտութեան ներկայացուցիչ անհրաժեշտ է համարվում ամեն տեղ նոյնչափ, որչափ և գիւղի հոգևոր ներկայացուցիչները։

Բայց վերջին տարիներս, այն օրուանից, երբ լոյս է ընկել «ինտելիգենտ» կամ «գրագէտ» տանուտէր խօսքը մեր գիւղական կեանքում մի տեսակ անախորժ երևոյթ է նկատվում, այն է սառնութիւն գիւղացիների կողմից դէպի տանուտէրերը, որոնց վրայ գիւղացիք սկսում են նայել աւելի ինչպէս մի ոստիկանական պաշտօնէի, մի արտօնուած եկուորի, քան իրենց ներկայացուցչի վրայ։ Եւ այդ շատ հասկանալի է։ Սկզբունքն այս է, որ պէտք է նոր տանուտէրերը գիւղում «ինտելիգենտներից» լինին։ Բայց ով է գիւղի ինտելիգենտը։—Էէբրայէլի, կամ Զուշու, կամ Զանգեզուրի գաւառացի մի երիտասարդ, որ Բագուի, կամ Բալախանի գործարաններում իւր անունը հաղիւ գրել է սովորել և «լուսաւորուել» է այնտեղի գինետներում, վերադառնում է հայրենիք իւրև «գրագէտ». գրագէտ է, ուրեմն և ինտելիգենտ է... Բուխայիսի կամ Գօրուայ գաւառի մի վրացի կամ խեբէլ, կամ օս Թիֆլիսի խոշանոցներում սովորել է գրել՝ հաց, միս, գազար, բոզի և այլն, և վերադառնում է գիւղը իրրև «գրագէտ». դա էլ գրագէտ է, ուրեմն և ինտելիգենտ է։ Իսկ սրանք գրանք են գիւղի ինտելիգենտները, ուրեմն և գրանք պիտի լինին տանուտէրները, քեռանները։ Մի տարի, որ բոլորովին կորուել է գիւղական կեանքից, որ բոլորովին մոռացել է գիւղի կեանքի և հայրենի օջախի սրբութիւնը, որ քաղաքներում վարակուել է ֆիզիրապէս և բարոյական ախտերով, նա վերակոչվում է կառավարել նահապետական անկեղծ կեանքը... և վերակոչվում է իւրի «ինտելիգենտ», և ահա մեր գիւղերում սկսվում է կազմակերպուել այն սիրտ հայ-վաշխառու «հաճիների» տոկոսները, հարկահաւաք կապալառուների վերադիր պահանջները օր աւուր բարդում և ծայրայեղ յուսահատութեան էին մատնում երկրի հարազատներին... նոյն զրութեան ու վիճակին ենթակայ էին նաև վանական միաբանութիւնները, որոնք ձիգ տարիներով ու դարերով ապրել՝ կամ աւելի ճիշտ՝ քարշ էին տուել իրենց գոյութիւնը ջերմեռանդ ժողովրդեան նուիրատուութեամբ։ Ինչպէս ամենուրեք՝ Տարոնոյ ս. Կարապետ հռչակաւոր մենաստանի միաբանութիւնն էլ պահպանում էր Տուրուբերանի բարեպաշտ ժողովրդի արդիւնքով, նա մատնատրում էր իւր քրտանց արդար եկամտից պահպանելու աղօթատուր վանականի և քրիստոնէական տաճարի կարեւոր գոյութիւնը, որոց ոսկի վերարկուներն ու թուխ սրմերը, որպէս անխորտակելի պարիսպ ու պատնէշ՝ դարերով պահպանել էին հայի ազգային ինքնուրոյնութիւնն ու գոյութիւնը...

1893 թուի երաշտութեան պատճառով վանքի տեսչական ցանքը այնքան նուազ բերք ունեցաւ, որ առանց հանրական աջակցութեան և նպաստի եթէ ոչ անհնարին, գէթ դժուար էր պահպանել վանականութիւնը Տարօնում, ուստի տեղական առաջնորդ և ս. Կարապետի վանահայր՝ Խարախանեան Ներսէս ծ. վարդապետը կարեւոր համարեց օրհնութեան թղթերով ու կոնդակներով դիմել այս ու այն, դեռ նիւթապէս ոչ այնքան քաջայուսած, անհատներին։ Իզուր անցան շրջակայող նուիրակների

Տարօնի վիճակում ահագին զրկանքների, ապագայ սրածութեան ու աւերմանքի...

—Իմ խօսքը՝ խօսք է, որդի, բայց արա քակիդ բերանը և իմ օրհնութիւնը պատրաստ կը լինի քո եղբօրորդու համար... յուսադրեց Տէր-Գէորգը, երբ դիմեց նրան Ռշոյի Մխիթարը. այդ դեռ բաւական չէր, անսիրտ քահանան երդմամբ վկայեց թրքական դատարանի առաջ, որ հարսը պատկանում է Ռշոյի տղային և Քաթըշ-Մուրատի պահանջը միանգամայն անարդար և ապօրինի էր։

Բ.

Ս. Դանիէլ վանքի վանահայր՝ Սիմէոն վարդապետի արդար քննութեամբ ապացուցուեց՝ որ Քաթըշ-Մուրատի հարսի յափշտակութեան իսկական և զօրեղ պատճառ պէտք էր համարել տեղական Գէորգ քահանան, որ շահագիտական նպատակով վաղօրօք շոյել էր Ռշոյի Մխիթարի շաբ մտադրութիւնը և քաջալերել էր նրան քրիստոնէական հաւատի և մարդկային խղճի դէմ ընթանալ...

Մշու վիճակի առաջնորդ՝ Ներսէս ծ. վարդապետ Խարախանեանը վերահասու լինելով եղելութեանը՝ կրօնական ժողովի որոշմամբ՝ անարժան քահանային ենթարկեց եկեղեցական ապաշխարութեան Ս. Առաքելոց վանքում, սակայն ապաշնորհ Տէր-Գէորգը երկու ամիս մնալուց յետոյ, Ռշոյի Մխիթարի և յայտնի գաւառան՝ Ջուլլի-աղայ Գէոյի խորհրդով և թելադրութեամբ ինքնագլուխ հեռացաւ վանքից։

Մինչդեռ խղճուկ Մուրատը իւր մի քանի մտերիմներով ու ազգականներով լեռնային որոնում էր սիրելի հարսին քրդական յօղանատատ տաղաւարներում և թիւրք զապթիների շրջանում, տեղական Տէր-Գէորգ քահանան կատաղում էր նրա վրայ երկրորդ՝ օրինաւոր՝ պսակի սրբազան խորհուրդը առանցող տղայի՝ Համզաշէխ գիւղացի Ռշոյի տղայ Մխիթարի եղբօրորդու հետ։ Գեղեցկուհուն ալի ու լեղի արցունքները անդօր և անկարող էին ազդելու կամ մեղմելու քարացած ու բթացած սրտերը. նրան քարշ էին տալիս ինչպէս գառնուկը՝ սպանդանոց...Ռշոյի տղայ Մխիթարը հրաւիրուած լինելով Մուրատի որդու հարսնիքին, տեսել և գիւթուել էր նորահարսի լուսեղէն գեղեցկութեամբ. նրա հոգու վրայ խոր ազդել էին աղջկայ սև, խոշոր աչքերը, բարակ իրանն ու վայելուչ «չինարի» հասակը։ «Մուրատը արժանի չէ այդպիսի անմման հարսի, նա իմը պիտի լինի։» Շար մտածմունքով պաշարուած էր նրա գլուխը հէնց պսակի օրհնութեան վայրկենից սկսեալ։ Եղելութեան նկատմամբ անտեղեակ կամ անգիտակ չէր Տէր-Գէորգը, նրան յայտնի էին քրդերի սակարկութեան մանրամասնութիւնները, յիշում էր և իւր ձեռօք կատարուած առաջին պսակը, սակայն արծաթ մէճիտիների փայլը ամենայն յաջողութեամբ կուրացրին նրա հոգու աչքերը. լուց ներքին մարդը և նա անվրդով ու հանգիստ սրտով պատճառ դարձաւ երկու սիրող սրտերի բաժանման և դուռ բաց արեց

*) «Մուխպիր» տաճկերէն բառ է և նշանակում է՝ մատնիչ, դաւաճան։

տիպը, որի հետքն անգամ մինչև այժմ չէ եղել։

Այս բոլորը տեսնելուց յետոյ մենք չենք հասկանում, թէ Գովկասի ռուս լրագրներից մի քանիսը ինչ են ուզում ու փնտրվում և կոկորդիլոսի արտասուք թափում, երբ զանազան գիւղերից բողոքներ են լսվում «ինտելիգենտ»-«պրագէտ» տանուտէրների մասին։ Խնդիրն աւելի լուրջ է, քան թէ թվում է առաջին նայուածքից, ուստի մենք կամենում ենք հաւատալ, որ տեղական մամուլը աւելի խոհուն ուշադրութիւն կը դարձնէ դրա վրայ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՍԱՍՈՒՆԻ ԳԻՒՂԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ։—ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԲՌՆԱԻՈՐԱԿԱՆ ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

«The Daily Telegraph»-ի յատուկ դրօթակալի Հայաստանից առաքած եօթներորդ նամակն է, որ տալիս ենք այս անգամ։

Սասունի տներից շատերը պարունակում էին առ նուազն վեց ընտանիքի անդամներ. այս պատճառով գիւղերից շատերն իրօք բաղկացած էին խումբ խումբ չէներից, որոնց իւրաքանչիւրն իւր առանձին անունն ունէր՝ մինչև անգամ գիւղի ընդհանուր անուան տակ մտելուց յետոյ։ Այս ինքնուրոյն կարգը, որ տարբեր է եւրոպականից, շատ սովորական էր Սասունում։ Փողոցների մասին խօսք անգամ չէ կարող լինել, որովհետև դրանք գոյութիւն չունին, և տներն այնպէս հեռու են իրարուց, որ ուր երկու կամ երեք չէներ իրար հարեւան են՝ չես իմանալ, թէ որ տեղ է վերջանում մէկն և սկսվում միւսը։ Դրանով է բացատրվում զանազան գիւղերի մէջ նորերս այրուած տների թուին վերաբերեալ ահագին տարաձայնութիւնը։ Գելիէ-Գուզանում, օրինակի համար, ոմանց ասելով մոխիր է դարձած ութսուն տուն, իսկ ուրիշների ասելով՝ 210։ Վերջին հաշիւը ի նկատ է առել և գրսի չէնները, իբրև Գելիէ-Գուզանի մասներ՝ մանաւանդ և այն պատճառով, որ նրանց բոլոր բնակիչները հարկ վճարել են Գելիէ-Գուզարում, և երբէք հարկահան չէ գնացել նրանց մօտ, մինչդեռ կ'երթար, եթէ նրանք ջոկ-ջոկ գիւղեր համարուէին։

Շնայելով կենսական պայմանների արտաքին միակերպութեան, Սասունի գիւղերը բաւական տարբերվում էին իրենց բնակիչների հակումներով, բարք ու վարքով և զբաղմունքով։ Մի քանիսը նուիրուած էին գլխաւորապէս երկրագործութեան. այդպէս էին, օրինակի համար, Շատախի գիւղերը, ուր երկիրը համեմատաբար արգաւանդ է, թէև գրան մշակելու եղանակները Նոյեան տապանի Արարատի վրայ նստելուց ի վեր զգալի յառաջդիմութիւն չեն արել։ Սասունցիք շատ հնապահ են։ Միւս կողմից Ցալուորիկում գինի էին պատրաստում, հենց այնպէս ճնշելով խաղողը, ինչպէս որ ճնշած կը լինէին մեր հին նախահայրերը, երբոր ջրհեղեղից յետոյ առաջին այգին անկեցին։ Ցալուորիկի գինին, եթէ լաւ կանգնած լինէր, շատ ընտիր էր համարվում, նոյն իսկ Խարպուտի գինուց էլ լաւ, թէև նորը կոչտ է ու տաիպ։ Սակայն գինու համը որոշողները սասունցիք չէին. նրանք մի պուտ անգամ չեն խմում, և գինեսէր սասունցին մի ուրացող և անհաւատ կ'երևնար նրանց աչքին։ Գուցէ այդ լինի պատճառը, թէ ինչու տալուորիկցիք անփոյթ էին աղնուացնելու իրենց գինին։ Գելիէ-Գուզանի ծաղիկներն ու պըտուղները շատ առատ հիւթ էին տալիս Սասունի պատուական մեղուներին։ Մեղուն, իբրև տնտեսութեան նպաստիչ, Դարեհ Թագաւորի օրերից ի վեր մեծ նշանաւոր դեր է խաղացել Հայաստանում, և մեղուաբուծութեան պայմանները մինչև այժմ համարեա թէ անփոփոխ են մնացել։ Հին հեղինակներից մինը, և յատկապէս Պլինիոսը գրում է, թէ Էրզրումի դաշտի ծաղիկներից մի քանի տեսակները ունին մի տեսակ թոյն, որ թաքնուած է մեղրի մէջ։ Ես զարմանալով նկատել եմ, որ այդ իրողութիւնն այսօր էլ ճիշտ է։ Անկարելի է ճաշակել Էրզրումի մեղրը՝ առանց մի այրիչ կսկիծ զգալու կոկորդի մէջ և մի գժնդակ գրգիռ ստամոքսում, որ կարող է օրեր տեւել։ Մեղրասէր Էրզրումցիք յարգում են Խնուսի մեղրը, մինչդեռ Գելիէ-Գուզանինը պահանջվում է ամբողջ տաճկական Հայաստանում։ Տալուորիկցիք իրենց ազատ ժամանակն արգիւնաւորելու և շնչին եկամուտ աւելացնելու համար պարապում էին նաև հանքերում, գործեալ անկանոն և հնաւանդ եղանակով։ Նրանք ականներ էին փորում գետնի մէջ և հանած երկաթի կտորները հալեցնում էին ազատ միջոցին գիւղի մասնաւոր բովքերում։ Այժմ պատմական դարձած Անդոկ դաղը հարուստ է ոչ միայն երկաթի, այլ և արծաթի հանքերով, և մի ժամանակ, երբոր հայերն իրենց երկրի իշխանն ու տէրն էին, արծաթի հանքերը շատ էին մշակվում, օգուտ տալով թէ դրամատէրերին և թէ բոլոր Հայաստանին։ Թիւրքերը, ուրիշ տեսակ հաշիւների հետևելով, ձեռք չեն տալիս այդ հանքերին, երևի թէ իրենց բաղաքական ժառանգներին անթերի գանձ թողնելու համար։

Սակայն ասատնորդը միայն մի տեսակն է այն բազմաթիւ հարկերի, որոնք ծանրանում են հայի վրայ և ճնշում նրան։ Նա պարտաւոր է վճարել և ոչխարի հարկ, որ $3^1/_4$ դահեկան է ամեն մի ոչխարի համար. այնպէս որ բարեկամ Հիլմի ընտանիքը, որ 1600 գլուխ ոչխար և այծ ունէր, վճարում էր տարեկան 47 ստերլին և 18 շիլինգ։ Գելիէ-Գուզանցիք վճարում էին մի առանձին հարկ մեղուների համար, յատկապէս տարեկան $2^1/_2$ դահեկան ամեն մի փեթակից։ Պէտք էր վճարել և հողի հարկ, որ դարձեալ դառն կեղերումների տեղիք էր տալիս, որովհետև քրիստոնեաների կալուածքն արձակ համարձակ աւելի պակաս է գնահատվում քան թէ մահմեդականին պատկանող նոյն մեծութեան և տեսակի երկիրը։ Հետեւեալ հարկն արօտի հարկն է, որ անտանելի էր մանաւանդ Սասունի լեռնոտ շրջաններում, ուր խոտն իսկապէս երկնային պարգև է համարուած։ Ամեն մի այծ, ոչխար, գառն և այն արածեցնելու իրաւունքի համար գիւղացիք պարտաւոր են վճարել տարեկան երեք դահեկան։

Հանրածանօթ բան է, որ Հայաստանում ճանապարհներ չկան, իսկ տեղ-տեղ շաւիղներ անգամ չկան, որոնցով կարելի լինէր անվտանգ անցնել։ Դա մի շատ վնասակար հանգամանք է գիւղական ժողովրդի համար, որ հեռաւոր շուկաներում վաճառելու տաւար և խաշինք ունի։ Բայց և այնպէս թիւրք կառավարութիւնը՝ ասես թէ անիրաւութեան վրայ դեռ նախատինք էլ բարդելու մտքով, պահանջում է ամեն մի արու էակից 12 դահեկան ճանապարհները կարգին պահելու համար։ Իւրաքանչիւր արու, եթէ նոյն իսկ մի ամսական էլ լինի, ենթակայ է այդ հարկին։ Իմ բարեկամ Հիլմի գերդաստանի պէս մի ընտանիքում, ուր 35 հոգի արու անձն կար, այդ տուրքը կ'անէր տարեկան ոչ աւելի, ոչ էլ պակաս քան 3 ստերլին և 13 շիլինգ,—մի տագնապ զումար՝ ոսկու երես հաղիւ տեսնող մի ժողովրդի համար, որ անհամեմատ քանակութեամբ տեսակ-տեսակ բերք պիտի ծախէր, որպէսզի կարողանար այնքան գումար ձեռք բերել։ Ե՛ւ աւելի տաժանելի է զինուորական հարկը, որ ընկնում է միայն քրիստոնէից վրայ, որոնք ոչ միայն զինաթափուած են օրէնքով, այլ դեռ մի վերին աստիճանի ծանր հարկ պիտի վճարեն այդ կսկիծելի արատաւորութեան համար։ Ամեն մի արու հայ, եթէ անգամ 110 տարեկան լինի և կամ թէ մի օրեայ մանուկ, պարտաւոր է վճարել 40 դահեկան, որով Հիլմի ընտանիքը, օրինակի համար, պիտի վճարէր տարին 1,400 դահեկան, ասել է թէ 11 ստերլին և 5 շիլինգ։ Բազմաթիւ մարդիկ, որոնք արդէն տարիներէ ի վեր մեռած են ու թաղուած, և կամ թէ այնպիսիք, որ այլ ևս չդիմանալով Տաճկաստանի կեանքի պայմաններին՝ Ռուսաստան են գաղթած ու և է ապրուստ ճարելու համար, տակաւին հարկատուների ցուցակի մէջ են, և որովհետև ամբողջ գիւղը պատասխանատու է իւր իւրաքանչիւր անդամին հանող հարկի համար, հետևաբար բազմաշրջան համայնքը պարտաւոր է նոյն իսկ տարագիրների և մեռածների փոխարէն վճարել։ Եթէ նրանք—չեմ ասում գլանան վճարել, որովհետև դա խելագարութիւն կը համարուէր,—այլ միայն ուշացնեն վճարքն և կամ թէ անձեռնհասութեան պատճառ յառաջ բերեն,—իսկոյն նրանց կալուածքը կը գրաւուի և կը յափշտակուի դրա իսկական գնից շատ պակաս պարագի համար։

«Սակայն մինթէ թիւրք իշխանաւորներն այնքան անմիտ կըլլին, որ կ'ուզեն մորթել ոսկի ձու ածող հաւն և մի զարման չեն գտնիլ իրերի այդ այլանդակ վիճակի դէմ, եթէ բողոք յայտնուի նրանց», կը գոչէ անգլիական հասարակութիւնը, ինչպէս որ գոչել եմ և ես ինքս՝ այն սարսափելին անձամբ տեսնելիս, որոնք մի սովորական բան են դարձել հայոց կեանքում։ Ես գիտեմ, օրինակի համար, որ գիւղացիք, յուսահատութեան հասած լինելով, խոնարհաբար աղերս մատուցին տեղական իշխանութեան, որ նա բարեհաճի ջնջել մուրհակները. վանքի աշխատաւորներն ու յաճախող ուխտաւորները մնում էին առանց սնունդի. վանահայրն անձամբ գիմեց Մշու փաշային, որ շշափելով միաբանութեան վերահաս վանգը, թոյլատրեց նրան շրջել թեմում հացահատիկ հաւաքելու։ Ներսէս վարդապետի հանգանակութիւնը սկսուեց նախ Բուլանըխ գաւառակի Գոփ գիւղից, որ 300—350 հայ բնակիչ ունի, ուր հիւրասիրուեց նա Քոսայի-Մխիթար-էֆենդու բնակարանում։ Տեղական Ցարութիւն աւագ քահանայի, Գասօ աղայի (որ «հիւրմաթի» անդամ էր), Քերովբ վարժապետի և 4—5 ուրիշ անձերի հետ շրջելով յայտնի կամ փոքր ի շատէ կարողաւոր ընտանիքներում, նրան յաջողուեց միմիայն Գոփ գիւղում 40 քիլօ ցորեան հաւաքել. այնուհետև կարգով պատեց վիճակի մնացեալ գիւղերում և 15—20 աւուր ընթացքում կարողացաւ 700 քիլօ ցորեան հանգանակել... Ժողովուրդը չի խնայում իւր լուման, երբ հնչում է նրա ականջին կրօնի սրբազան անունը, երբ դիմում է նրան կղերականը իւր ցանկալի ցորդորով Աստուածային տաճարի պահպանութեան ու պայծառութեան համար. բայց և այնպէս գիտէ նա խընդրողի արժանաւորութեան չափով՝ չափել և իւր տուրքի քանակութիւնը...

Իւր այցելութեան միջոցին, Ներսէս հայր սուրբը անչուշտ հետաքրքրուում էր և թեմի եկեղեցիների ու եկեղեցականութեան դրութեամբ. քննում էր պատահած վէճերն ու բողոքները ըստ հոգեւորին, և լուծումն տալիս։ Այդ իսկ միջոցին Եօնճալի գիւղացի Խաչատուրի թոռ՝ Մելիքեան Մխիթարը տարել էր իւր հարազատ մօրեղբօր՝ Թեղուտ գիւղացի՝ Մանուկի դուստրը իւր որդուն կնութեան։ Պէտք էր լսել վիճակի ժողովրդեան արդարացի պահանջը՝ հալածել եկեղեցական օրէնքի անսասանողներին, սակայն Ներսէս Ծ. վարդապետը շատացաւ բաժանելով ապօրինի կենակիցներին միմեանցից և յանդիմանելով Մխիթարին իւր անվայել և միանգամայն հակաքրիստոնէական արարմունքի համար...

—Աֆէրը՞մ, զաւակներս, գովում եմ ձեր ճշմարիտ հաւատարմութիւնը. աշխատեցէք այսուհետև աւելի ևս հետամուտ լինել և նորանոր տեղեկութիւններով ուշադրութեան արժանի անել տալ ձեր հաւատարիմ հպատակութիւնը բարեխնամ և արդարամիտ սուլթանի գահին... ես էլ խօսք եմ տալիս, որ երբ ձեր շնորհիւ մերկացուի «ընկերութեան» բոլոր գաղտնիքները, ձեր կուրծքերը զարդարել տամ շքանշաններով։ Քաջալերեց նրանց բռնակալի ներկայացուցիչը և շտապեցաւ այդ առիթ հեռագրով զեկուցանել Բիթլիսի վալի փաշային. վերջինս էլ սրամտութեամբ լցուած՝ աւելի զոյն և կարեւորութիւն տալով հայ «մուխպիրների» մատնածին «ընկերութեան» գոյութեանը՝ հեռագրեց Բարձ. Դռան, խնդրելով թոյլատրել, հալածել յեղափոխականների պարզլիսին և շարութեան որոմը սաղմի մէջ խեղդել։ Եւ ահա մի գիշեր կանոնաւոր զօրքով ու զօրականներով շրջապատուեց քրիստոնէական սրբավայրը. ֆանատիկոս զուռնականները ամենայն անպիտութեամբ յափշտակեցին, ոչնչացրին ու ապականեցին հուշակաւոր մենաստանի զոյքն ու սրբութիւնները. այրեցին սրբազան մատեանները ու գրքերը, փաստաթղթերն ու գաւառաւոր պատուական կնդակները... Կապտեցին հոգեւոր դէտի ձեռները, նստեցրին նրան իւր ձին և վեր առնելով նամակների մի ստուար կապոց, «իբրև աւաղակ սուսերօք և բրօք» փոխադրեցին նորան իւր «զողզոթան»—Բիթլիսի մութ, խոնաւ և մահաշունչ բանտի կամարների ներքև, ուր սպասում էր նրա կեանքի խաչը, ուր պիտի ընկնէր նա, որպէս «հատն ցորենոյ» ըստ Աւետարանին. . .

Վալի փաշայի գերանի՝ համեմատական թանձրութեամբ մեղադրանքները չէին արդարանում կամ ապացուցանում գէթ շիլդի նման փաստերով. դաւաճանների զրախօսութիւններն ու բարուրանքները զուրկ էին հիմքից. սակայն փաստ էր, որ Ներսէսը մէկն էր մեր հաղուագիւտ, արժանաւոր հովիւներից. որ հայը՝ հայի, աշակերտը՝ վարդապետի, որդին՝ ծնող հօր արիւնն էր ծծում, որ տիրում էր շար նախանձի, դատապարտելի դաւաճանութեան ու գարշելի մատնութեան ոգին...

Դ.

Վաղուց է որ գաւառակում խօսվում էր Զէյթաղուր գիւղացի մի հրաշագեղ օրիորդի մասին. նրա ձեռը շատերն էին խնդրել առաջարկելով հարուստ գլխագին (բաշլըղ), սակայն նրա ծնողի ցանկութիւնն էր իւր թանկագին դստեր համար ընտրել յարմարաւոր և արժանաւոր փեսացու։ Համազասպի Ջուլկի տղայ Դէօն էլ խնդրեց նրա ձեռը իւր որդու համար, բայց բացասական պատասխան ստացաւ։

—Մուխպիրների—ազգային Վասակների—համար չէ, որ ծնել ու սնուցել եմ իմ դուստրը. լաւ է նրան յօշատեմ և գազաններին կերակուր բաժանեմ, քան թէ դաւաճանի տան զարդ ուղարկեմ... մեծախօսեց գեղանի աղջկայ հայրը, որ, պէտք է փակագծի մէջ ասենք, ներշնչուած էր Սիմէօն վարդապետից, թէև այդ երեոյթը դաղտնի շրջմեց նաև Ջուլկի տղայ Դէօյից։

—Բարի, ինչպէս և լինի ես կը լուծեմ իմ վրէժը. ցոյց կը տամ վարդապետին իւր անսպասեալ և անբարեմիտ խորհրդի համար...—մտմտում էր Դէօն. և յիրաւի, առիթները չէին պակասում իրագործելու իւր շար դիտաւորութիւնը. պէտք էր օգուտ քաղել թիւրք կառավարութեան տրամադրութիւնից զէպի հայոց տարրն ընդհանրապէս և հոգեւորականութիւնը։ Նա անմիջապէս միացաւ սակաւ ինչ առաջ Ներսէս Ծ. վարդապետից հալածուած՝ Գէորգ քահանայի և Համազասպեցի՝ Ռշոյի տղայ Մխիթարի հետ. նրանք խորհրդածեցին դրախօսել կառավարութեան առաջ Սիմէօն և Ներսէս վարդապետներին, թափել իրենց սրտի թոյնը և անմեղների կրաստեան պատճառ դառնալ։

«Մուխպիրները» ներկայացան տեղական գայմագամ (գաւառապետ) Խաթունօղլի՝ Հաշիմ-բէկին (Կարսի գաղթականներից) և սկսեցին իրենց մատնածին մեղադրանքն այսպէս՝ — «Թող ապրած մեծ օսմանեան Մեծ-ինքնակալը. հինգ հարիւր տարի է անա, որ Աստուածային ողորմութեամբ թէ մեր նախնիքը և թէ մենք ամենայն հաւատարմութեամբ և անձնուէր ջերմեռանդութեամբ ծառայել ենք և կը շարունակենք ծառայել Վեհափառ Սուլթանին. հոլովուել են երկար ու ձիգ տարիներ ու դարեր, սակայն Փաղիշահի կառավարութիւնը՝ մեր և մեր նախնիքների նկատմամբ՝ ցարդ ոչ մի ապերախտութեան ցոյց նկատած չէ. հայը Սուլթանի անձնուէր ստրուկը՝ «սատղան» է եղել և պիտի շարունակէ լինել. սակայն ցաւելով պիտի յայտնենք, որ վերջին ժամանակներումս մեր նեղմիտ և անարժան հոգեւորականների յատուկ թելադրութեամբ նկատում է դատապարտելի անհաւատարմութեան տգեղ դաղափարը. վարդապետների յորդորանքով ցնորամիտ երիտասարդները ընկերութիւն («Ջանֆիսան») են տարել. արտասահմանից գէնք և ռազմամթերք են փոխադրում մեր երկիրը։ Հայկական մի քանի վանքերն ու եկեղեցիները ներկայումս բերդերի և ամրութիւնների են վերածուել... աւելի պարզ՝ Ս. Դանիէլ վանքի առաջնորդ՝ Սիմէօն վարդապետը կամաւորների գլուխ անցած՝ նպատակ ունի կոտորել քիւրդերին, յափշտակել նրանց գոյքը և, որ գլխաւորն է, ապըստամբեցնել երկրի խաղաղ ազգաբնակութիւնը Օսմանեան մեծազօր ինքնակալութեան դէմ... մենք, այս երեքս, ակամատես եղանք թէ ինչպէս երկու «դրբօ» (արկղ) զէնք Սիմէօն վարդապետը գնաց անձամբ ընդունելու, որ և ծածկելով ձորակի ս. Աստուածածին մատուռի մօտ, վանքից պահպանն նշանակից հոկելու։ Զէնքեր փոխադրող՝ «ընկերութեան» անդամներին առնելով իւր հետ, անարժան եկեղեցականը վերադարձաւ ս. Դանիէլ, երկու օրից յետոյ, իւր հիւրերի և մի քանի տարիներ ու դարեր, սակայն Փաղիշահի կառավարութիւնը՝ մեր և մեր նախնիքների նկատմամբ՝ ցարդ ոչ մի ապերախտութեան ցոյց նկատած չէ. հայը Սուլթանի անձնուէր ստրուկը՝ «սատղան» է եղել և պիտի շարունակէ լինել. սակայն ցաւելով պիտի յայտնենք, որ վերջին ժամանակներումս մեր նեղմիտ և անարժան հոգեւորականների յատուկ թելադրութեամբ նկատում է դատապարտելի անհաւատարմութեան տգեղ դաղափարը. վարդապետների յորդորանքով ցնորամիտ երիտասարդները ընկերութիւն («Ջանֆիսան») են տարել. արտասահմանից գէնք և ռազմամթերք են փոխադրում մեր երկիրը։ Հայկական մի քանի վանքերն ու եկեղեցիները ներկայումս բերդերի և ամրութիւնների են վերածուել... աւելի պարզ՝ Ս. Դանիէլ վանքի առաջնորդ՝ Սիմէօն վարդապետը կամաւորների գլուխ անցած՝ նպատակ ունի կոտորել քիւրդերին, յափշտակել նրանց գոյքը և, որ գլխաւորն է, ապըստամբեցնել երկրի խաղաղ ազգաբնակութիւնը Օսմանեան մեծազօր ինքնակալութեան դէմ... մենք, այս երեքս, ականատես եղանք թէ ինչպէս երկու «դրբօ» (արկղ) զէնք Սիմէօն վարդապետը գնաց անձամբ ընդունելու, որ և ծածկելով ձորակի ս. Աստուածածին մատուռի մօտ, վանքից պահպանն նշանակից հոկելու։ Զէնքեր փոխադրող՝ «ընկերութեան» անդամներին առնելով իւր հետ, անարժան եկեղեցականը վերադարձաւ ս. Դանիէլ, երկու օրից յետոյ, իւր հիւրերի և մի քանի

են կնոջ, պատում են նրա գիշերուայ շապիկը, դուրս են քարշում նրան գէպի բակը ահաւոր ու քար կարած և ձայն հանելու անկարող մանկանց ներկայութեամբ, և այնքան են ծեծում թշուառին, որ նրա մարմինը կապտում է։ Այնուհետև այդ քաջերը յափշտակում են տանից ամեն տեսակ ցնցոտիք և անէծքների նոր հեղեղ թափելով, թողնում են կնոջն ու հեռանում։ Բայց խեղճ այրին երևի թէ կ'ուրանայ այդ բոլոր անցքը, իբրև մի չար զրպարտութիւն, մինչև որ հարց ու փորձ անողը մի եւրոպացի չլինի։ Միևնոյն Արմագան գիւղում ութսուն և հինգ հայ ընտանիք կայնն։ Դրանցից տասուհինգը, ասել է թէ մօտ 150 հոգի նորերս Ռուսաստան գաղթեցին. մնացած հօթանասուն կամ վաթսուն ընտանիքը, այսինքն մօտ 600 մարդ կիսամեռ Եւայի զրուութեան մէջ են։— Այո, հարկերի խնդիրը մի սոսկալի խընդիր է տաճկական Հայաստանում։

Փ. Վ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամսոյս 13-ին հեռագրում են The Daily News-ին Վարնայից, թէ Սուլթանի կարգած յանձնաժողովը, որի նպատակն է Հայաստանում մշակուելիք ռէֆորմների ծրագիրը պատրաստել, այդ օրն առաջին նիստ է ունեցել Գրէտայի կուսակալ Թուրքան փաշայի նախագահութեամբ։ Յանձնաժողովն այդ նիստում որոշում է իւր գործունէութեան կարգը և վճռում ամեն օր նիստ կազմել՝ բացի ուրբաթ ու կիրակի օրերից, մինչև որ գլուխ բերէ իւր գործը։

* * *

Անգլիական նոր սահմանուած թերթերից երևում է, որ հայկական հարցով զբաղուած միտինգները մինչև այսօր շարունակվում են Անգլիայի զանազան քաղաքներում։ The Daily News-ի խմբագիրը յայտնում է, թէ ստացել է միստր Գ. Յակոբեանի՝ լորդ Կիմբերլէյին մատուցած տեղեկագրի մի պատճէնը։

* * *

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՍԱԼԱՅՈՒՄ

Դեռ մարտ ամսին էր, որ Մեծ-Սալայի ժողովրդի բուռն ցանկութեան համաձայն, պատգամաւորներ գնացին Նոր-Նախիջևան և ներկայանալով Վեհափառ Հայրիկին, Նորին Օծութեանը հրաւիրեցին Մեծ-Սալա։ Այդ օրուանից սկսած ժողովուրդը սրտատրոփ սպասում էր, թէ երբ պէտք է հասնի այն օրը, այն ցանկալի և ամենին ուրախութիւն պատճառող ժամը, որ ուտելիք տրուի թէ Վեհափառը գալիս է։

Վերջապէս հասաւ այդ ուտելիքի օրը, եկաւ այդ բարի և ուրախութիւն պատճառող համբաւը. եկաւ ապրիլի 13, ուր բոլոր ժողովրդին յայտնի եղաւ, որ վաղը, հինգշաբթի, երևելի Վեհափառ Հայրիկը ցանկութիւն է յայտնել այցելելու Մեծ-Սալան։

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ թէ Մեծ-Սալայում և թէ շրջակայ հայաբնակ գիւղերում։

Ամեն կողմերից դէպի Մեծ-Սալա են դիմում հաւիւրաւոր սայլեր, իրենց հետ բերելով ժողովուրդի մեծ բազմութիւն. մի երկու ժամից յետոյ եկեղեցու բակը լցւում է ահագին բազմութիւնով. կին, մարդ, երեխայ, տղայ, աղջիկ այնպէս խառնուած գրութեան մէջ են, կարծես ուլատաղի լինի. ժողովրդի թիւը մօտ 1000-ի է հասնում։ Առաւօտուանից սկսած պատրաստութիւններ տեսան Վեհափառ Հայրիկի ընդունելութեան համար. երեկոյեան դէմ արդէն բոլորը պատրաստ էր։ Այն փողոցները, որտեղից Հայրիկը պէտք է անցնէր, զոյնզոյն գրօշակներով էր զարդարուած, ուելի ճոռ կերպով զարդարուած էր եկեղեցու բակի դուռը. իսկ եկեղեցու դռան վերևը գլխաւորով գրուած էր՝ «Ամառած սրտագէտ, պահեա՛ զմս ձիգ զհովսեան մեր՝ Մկրտիչ Հայրիկ։ Զքեզ կերպով զարդարուած էր եկեղեցին, բոլոր ջահերն էլ վառած էին. Ս. Խորանը ևս լաւ ջահաւորուած էր, կերոնների թիւը ուելացրած. եկեղեցուց մինչև բակի դուռը կարմիր մահուդ էր փռուած և կանաչ ոստերով ծածկուած. բակում երկու կարգ կանգնած էին աշակերտները և աշակերտուհիները իրենց ուսուցիչներով. այստեղ էին ժողովուած ևս բոլոր շրջակայ հայաբնակ գիւղերի ուսուցիչները. հոգաբարձութիւնը և երեցփոխանները։ Այդ օրը գիւղերում դասաւանութիւն չկար։

Ժամի 4-ին եկեղեցու աւագ զանգակը խփեց և աւետեց Հայրապետի գալուստը. ահ, ինչ ցնծութիւն, ինչ ուրախութիւն, ինչ ոգևորութիւն, թէ մեծ, թէ փոքր, թէ այր և թէ կին շտապում էին յարմար տեղ ուրտեղ, որտեղից կարելի լինէր տեսնել Հայոց Հայրիկին։ Բոլորի աչքերն էլ դարձան դէպի Վեհափառ Հայրիկին բերող կառքը. հազարաւոր ձայներ գոռում էին. «Կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Հայրիկ»։ Վերջապէս Վեհափառ Հայրիկը իջաւ կառքից, նորից օրը թնդաց կեցցէներով. հոգևորական դասը արդէն պատրաստի կանգնած էր. Վեհափառ Հայրիկը մտաւ տմպհովանու տակ և առաջնորդուեցաւ եկեղեցի։ Հայոց Հայրիկը աշակերտների մօտով անցնելիս, լսելով նոցա բերանից դուրս թռած կեցցէները, կանգնեց խաչակնքեց. և այդպէս երկուստեք խաչակնքելով ժողովրդին մտաւ եկեղեցի։

Եկեղեցում Վեհափառ Հայրիկը աղօթելուց յետոյ դուրս եկաւ և ուղղուեց Իւր համար յատուկ պատրաստուած օթեանը։ Կեցցէներին վերջ չկար։

Այդ օրը բաղդ ունեցան ներկայանալու Հայրիկին բոլոր քահանաները, ուսուցիչները, հոգևորականները և երէցփոխանները։

Օրը արդէն մթնում էր. Վեհարանի շուրջ կողմը տհագին բազմութիւն շրջապատած էր. ժողովրդի ուրախութիւնը չափ ու սահման չկար, հաւաքուած էին աշակերտները, որոնք իրենց երգերով և կեցցէներով օրը թնդացնում էին։ Գիւղի երիտասարդները նախանձելով աշակերտներին, առանձին խումբ կազմելով ըսկըսեցին երգել և կեցցէներ ազազակել։ Մինչև ժամի 11-ը լուսում էր երգերի ու անթիւ կեցցէների ազազակները։ Միւս օրը, Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ պատարագ եղաւ. պատարագիչն էր Յուսիկ սրեղան։

Ժամի 9-ին Վեհափառ Հայրիկը կառքով եկեղեցի իջաւ և վարդապետներով շրջապատուած եկեղեցի առաջնորդուեցաւ։ Եկեղեցին լի էր ժողովրդով. տեղ ձգելու տեղ չկար։ Ս. Գիրքը կարդալուց յետոյ Վեհափառ Հայրիկը սեղան բարձրացաւ և մի քարող խօսեցաւ, որ մօտ 3/4 ժամ տեւեց։ Հայրիկի քարոզը ընդհանուր էր. Նա խօսում էր շատ պարզ և շատ հասկանալի լեզուով։

Նա յորդորեց մեզ սիրով և համբաշխ ապրել, Նա յորդորեց, որ միմեանց միշտ օգնող լինինք։ Նա երկար խօսեցաւ երիտասարդութեան մասին։ Նա ասաց.

«Ապրելով ժողովի քաղաքներին, դուք աշխատեցէք վերցնել Նորա բարի և առաքինի կողմերը և սովորութիւնները. բայց մի՛ գիմել արբեցողութեան և շռայլութեան. մտքներդդ չանցկացնէք՝ թողնել գիւղը և քաղաքում բնակուելու ցանկութիւն յայտնէք։ Ամուր պահպանեցէք ձեր գիւղական, նահապետական երջանիկ կեանքը. պահպանեցէք ձեր գուլպանը, խոփը, եզը. Հայրիկ ևս գիտէ երկիր մշակել, Հայրիկ ևս պարապել է երկրագործութեամբ, Հայրիկ լաւ գիտէ թէ ինչքան բաղցր է երկրագործ մշակի կեանքը, թէ ինչքան երջանիկ է հայ երկրագործի անցած օրերը»։

«Լսել եմ լաւ ուսումնարան ունիք չինած, սէր ունիք ուսման հետ. Ես ալ կը յորդորեմ ձեզի կրկնապատկել ձեր սէրը, ոչ մի ջանք մի խնայէք ձեր որդոց կրթութեան համար. բայց միայն ուսման մէջ կրթելով չբաւականանաք. արհեստին մէջ ալ կրթեցէք, ձեր որդոցը արհեստ սովորելու տուէք»։

Հիմնեցէք ձեզ համար ընկերութիւններ, օգտոյ եղէք խեղճերին, ձեր սրտոցը բարձր ուսումի ուղարկէք. կարդացէք գրքեր, լրագրներ, միշտ աշխատեցէք, ժամանակը պարապ մի անցնուր»։

«Աշխատեցէք, որ հանդերձեալ կեանքում պատրաստի հաց ունենաք, այստեղ պէտք է պատրաստ լինիք, որ այնտեղ հաց գտնէք, ապա թէ ոչ քաղցած կը մնաք։»

Վեհափառ Հայրիկը այս ամենը բացատրում էր Սուրբ Գրքից բերելով դանդան օրինակներ։ Վեհափառ հայրիկը մի նկատողութիւն արաւ, այն է՝ որ եկեղեցին ճոխ զարդարուած էր։

Նա ասաց.

Շատ օտար սովորութիւններ սեպհականացրել էք։ Երբոր ողջ առողջ վերադառնամ Ս. Էջմիածնին, Ես մի շարք կանոններ պէտք է գրեմ եկեղեցիների զարդարանքի մասին՝ ինչ տեսակ ձևի մէջ պահելու համար»։

Քարոզը վերջացնելով շնորհակալ եղաւ Մեծ-Սալայի հայ հասարակութեան դէպի Իրեն ունեցած անկեղծ սիրոյ զգացմունքների համար, օրհնեց ամենքին և սեղանից վայր իջաւ։

Վեհափառ Հայրիկը եկեղեցում մընաց մինչև պատարագի վերջանալը, ապա այցելեց ուսումնարանը։ Ուսումնարանի դահլիճում կանգնած էին աշակերտները և աշակերտուհիները իրենց ուսուցիչներով, հոգաբարձուներով։ Վեհափառը անցաւ աշակերտների միջով կանաչ խոտի վրայով և բազմեցաւ իրեն համար պատրաստած աթոռի վրայ։ Աւագ ուսուցիչը մի կարճ ճառ կարդաց։ Հայրիկն այստեղ ևս չդադարեցաւ մի քանի բոպէ խօսելու, գլխաւորապէս կրթութեան վրայ. այստեղ ևս ժողովուրդին յորդորեց որ իրենց վերջին կոպէկն անգամ չխնայեն իրենց որդոց կրթութեան համար։

Հայրիկը օրհնեց աշակերտներին, աշակերտուհիներին, և ուսուցիչներին և ասաց այս խօսքերը.

«Քաղաքում եղած ժամանակս ինձ տկար էի զգում, զալով այս գիւղն, բոլորովին առողջացայ։ Ես շատ մրխիթարուած եմ. կը հեռանամ ձեզնից գոհ և ուրախ սրտով, շատ շնորհակալ եմ բոլոր հասարակութիւնից»։

Վեհափառ Հայրիկը դուրս եկաւ։ Երգեցիկ խումբը հետևելով հայոց Հայրիկին, երգեց «Հայրիկ, Հայրիկ» երգը և այդպէս երգելով Նորան տարան մինչև կառքը։ Կեցցէներին չափ ու սահման չկար, ժողովուրդը սոսկալի յափշտակուած հետևում էր կառքին և կեցցէներ ազազակում։ Մէկ ժամից յետոյ, սկըսուեցաւ ժողովուրդի ընդունելութիւնը։

Ճաշից յետոյ, Վեհափառ Հայրիկի կարգադրութեամբ պատրաստութիւն տեսան մեկնելու գիւղից։

Ժամի 3-ն էր, արդէն կառքը պատրաստ էր. 50-ի չափ ձիաւորներ ժողովուած էին. հայոց Հայրիկին պէտք է տանէին մինչև Նոր-Նախիջևան. ամեն ինչ պատրաստ էր, սպասում էին Վեհափառ Հայրիկին. վերջապէս երևեցաւ պաքնեհասակ, արծուագէմ, և անսահման բարութեան պատկեր կրող Հայրիկը. հազարաւոր բերաններ, միանգամից կեցցէներով թնդացրին օդը։ Վեհափառը խաչակնքեց, օրհնեց Իրեն բարի ճանապարհ մաղթող բազմութեանը և տուեց Իւր մնաս բարեաւի ողջոյնը և կառքը նստելով հեռացաւ։

Ձիաւորներով շրջապատած, հեռացաւ գնաց Վեհափառ Հայրիկը, մեր պաշտելի ժամանակաւոր Մեծ Հիւրը, Ազգիս սիրելեալ Վեհափառ Կաթողիկոսը։

Այո, Հայրիկը գնաց, բայց Նորա քաղցրահնչիւն «Հայրիկ» անունը, Նորա անմոռան խօսքերը, Նորա սուրբ դէմքը այնպիսի մի խոր տպաւորութիւն թողին մեզ վրայ, որ դարեր կանցնին, Մեծ-Սալայի հասարակութիւնը չի մոռանալ՝ որդէց որդի պատմելով։ Մեծ-Սալան հիմնարկութեան օրից ի վեր չէ տեսել այսպիսի Մեծ Հիւր, ինչպէս Հայոց Հայրիկը. և յոյս էլ չունենայ թէ երբ և ինչ է կարող է տեսնել։

Քեռավաղցի։

17 Ապրիլի. 1895 թ.
Մեծ-Սալա։

* * *

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են թէ Ենիսեյրուութիւն կայ Կովկասում վերջացնել ծխահարկը և մտցնել հարկահաւաքութեան մի այլ ձև, որ աւելի է համապատասխանում տեղական պայմաններին։

* * *

Ենիսեյրուութիւն կայ Կովկասում իւրաքանչիւր նահանգում բանալ մի այսպէս օրէնք գալ։ Բայի գրանից ծրագրուած է Թիֆլիզում բանալ մի գինեգործական գպրոց և մի գիւղատնտեսական-այգեգործական սեմինարիա վերոյշեալ գպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։

* * *

Կովկասեան երկաթուղու դէմ վրայ, Բագուի Նահանգում աւազակութիւնները եւ սպանութիւնները դեռ չեն դադարում։ Ուշարի, Քիւրդամիր և մէս գրանց մօտիկ կայարաններում երկաթուղու գնացքի վրայ հսկում են տեղական գիւղացիներից կազմած պահապանների խմբեր, որոնք այնքան վատ են զինուած, որ հազիւ թէ կարողանան դիմադրել աւազակների յարձակման։ Չնայելով այդ պահապան խմբերին այնու ամենայնիւ փախստական աւազակները իրենց գործը տեսնում են։ Ինչպէս գրում են Ուշարի կայարանից, «Նով. Օր.»-ին, ապրելի 18-ի գիշերը պախստական աւազակները սպանել են Կազման գիւղի տանուտէրին։ Կազման են եկել 150 կօղակ և ձերբակալել են մի քանիսին, որոնց կասկածում են իբրև տանուտէրի սպանողներ։

* * *

Երկրագործական և պետական կալուածների նախարարութիւնը պետական խորհրդին նոր ծրագիր է ներկայացրել Կովկասեան հանքային ջրերի կառավարութեան վերաբերութեամբ։ Այդ ծրագրով ոչնչացնվում է կառավարչական կոմիսարի պաշտօնը և սահմանվում է տեսչի պաշտօն, որին պիտի աջակցեն տեղական բժիշկները։

* * *

Քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական տեսանը իր ամսոյս 22-ի նիստում որոշեց հաստատել Թիֆլիզի քաղաքային խորհրդի՝ հանդուցեալ քաղաքագլուխ Իգմայլեանի այրիին նշանակած տարեկան 1600 ռուբլի և սրդուն 800 ռուբլի թոշակը։ Հանդուցեալս մօրը յատկացրած տարեկան 600 ռ. թոշակը տեսանը անվաւեր համարեց։

* * *

Ստացանք „Собраніе стихотвореній Виктора Гюго, въ переводахъ русскихъ писателей, подъ редакціей И. Ф. Тхоржевскаго, выпускъ I“. Այդ առաջին տետրակն է, որ հրատարակում է Պ. Ցիսրժեվսկին և ինչպէս յայտնում է դեռ պիտի հրատարակէ 15-ից մինչև 20 տետրակ։ Պարոն Ի. Ցիսրժեվսկին Կովկասեան ռուս գրականութեան մէջ արդէն վաղուց յայտնի է և յարգուած իբրև քաջ ռուս հրապարակախօս, իբրև բանաստեղծ և թարգմանիչ։ Նրա հրատարակութեամբ է լոյս տեսել ռուս լեզուով նշանաւոր Ֆրանսիական ժողովրդական բանաստեղծ Բերանժէի ստանաւորների լիակատար ժողովածուն։ Վիկտոր-Հիւգոյի ստանաւորների թարգմանութեան լեզուն սահուն է և գեղեցիկ. իւրաքանչիւր տետրակի գինն է 20 կոպէկ։

* * *

Ռուս գիրասանական խումբն ամսոյս 21-ին յաջողութեամբ ներկայացրեց մեր տաղանդաւոր դրամատուրգ Ա. Սունդուկեանցի «Ամուսիններ» կոմեդիան։ Հետևեալ անգամ մենք կը տանք ընթերցողներին այդ ներկայացման հաշիւը։

* * *

Ո՞վ կարող էր երևակայել, թէ մանուկների համար այնպիսի խաղալիներ են պատրաստվում՝, որոնք մահ կարող են պատճառել, բայց այդպիսի խաղալիքներ ծախվում են Թիֆլիզի խանութներում. դրանք փոքր սաբրճանակներ են «Մօնտէ-Կրիստոյի» սիստեմով և լցնվում են փամփուշտով և զընդակով։ Այդ փոքրիկ սաբրճանակներից շատերը գնում են և նուիրում երեխաներին։ բայց ահա թէ ինչ ծանր հետևանքներ է ունենում այդպիսի խաղալիքների բանացնելը. ապրելի 20-ին շաբաթ օրը Աւրաժեան փողոցի վրայ ատուսական որդի Վլադիմիր Պարեսովը իր 14 տարեկան ընկեր Վլադիմիր Ցուխարելիի հետ խաղալու ժամանակ ձերքին ունէր այդ խաղալիք - սաբրճանակը։ Պարեսովը սարճանակը արձակեց և զընդակը ծածկելով Ցուխարելիի ձախ կողքը ուղղակի մտաւ խեղճ երեխայի սիրտը. վիրաւորուած երեխան հազիւ կարողացաւ մինչև տուն վազել և այդտեղ մի քանի բոպէից յետոյ վախճանուեց թշուառ ծնողների աչքի առաջ, որոնք կորցրին իրենց միակ զաւակին։

Անհրաժեշտ է որ իշխանութիւնն անպայման արգելէ այդպիսի վտանգաւոր խաղալիքների վաճառումը։

* * *

«Մշակ» լրագիրը նոր օրէնքներ է թելադրում կառավարութեան և նոր պարտադիր համանման ծրագիր է մշակում պաշտօնական «Կովկաս» և Ս. Էջմիածնի օրգան «Արարատի համար։ «Մշակը» ասատիկ վրդովնած է, որ «Արարատի» վերջին համարում չէ հաղորդուած Լեոն վարդապետ Խոջայեանի մահուան լուրը և որ չէ գտնուել ոչ մի հոգևորական, որ նրա մասին հարկաւոր համարէր գէթ երկու տող գրել։ Այդ բանի մէջ «Մշակի» խմբագրութիւնը գտնում է քրէական և գրեթէ քաղաքական յանցանք ու մի չտեսնուած յանդգնութեամբ հետևեալ տողերն, է գրում իր էջերում, տողեր, որոնցից ստիկանական հաղորդագրութիւններն անգամ կը կարմրէին։

«Թոյլ տուէք հարցնել—ասում է այդ լրագիրը—եթէ վաղը մի որևէ կառավարչական պաշտօնեայ մեռնի քննչին տեղական Ղուկաս վարդապետը։

Բին-Բաշին հարուստ գրպանով տուն վերադարձաւ. և իւր ձերբակալած 17 երևակայական յեղափոխականներին ներկայացրեց Բիթլիսի վալիին. յանցաւորները ծռնը կապանքների մէջ արգելուեցին մութ և մահաշունչ գնդանում. իսկ քննչին ու մուխտիրները փաշայի առանձին ուշադրութեանը՝ «էֆէնդիմ»ների արժանացան ու քաջալերուեցին...

Ինչ տարակոյս, որ անմեղների բարեկամները երելութեան մասին ամաչեցին իրանց ձայնը հասցնել Բ. Դռան, հայցելով արդար դատաստան։

Զինուորական քննչին կոչեցին Կ. Պոլիս և «Եէլդզ» պալատում խորը համոզուելով հայերի անմեղութեան մասին, շատացան միմիայն պաշտօնական անելով (քննչին) և խիստ յանդիմանութիւն կարդալով շահախնդիր գայմագամին իւր «ստախօս-մուխտիրներով»...

Իսկ տարաբաղդ Նեսրէս և Սիմէօն վարդապետները իրենց մի քանի քահանաներով ու անմեղ համայնքով տակաւին մաշւում են բանտերի ու երկաթեայ կապանքների մէջ...

—

Ահա թէ ինչպիսի երևոյթներ՝ մասամբ՝ ստեղծեցին Զաբի-փաշայի մատնածին «Հայկական - խռովութիւնները» և պատճառ դարձան Սասունի քստմնելի ու արիւնոտ դէպքերին կամ թիւրքական անլուր գազանութիւններին...։

29 մարտի 1885 թ. Կրպէ։
Քիշնև։

ուրիշ մարդկանց ուղեկցութեամբ, դարձեալ գնաց մատուռի ձորակը և զէնքերը ամենայն զգուշութեամբ փոխադրեց «Գօնզլիկ» լեռան գագաթը, որ Բճնայ մօտն է. մի ամբողջ օր մնացին այնտեղ, ապա ճանապարհեց զէնքեր փոխադրող հրէշներին և ինքը վերադարձաւ վանքը»...

—Այս է մեր արդար վկայութիւնը Աստուծոյ և մեր խղճմտանքի առջև»...— աւելացրեց Ամատարանի քարոզիչը։

Գայմագամը սրտի առանձին բերկրութեամբ լսեց դաւաճաններին և, գիտնալով հանգերձ նրանց բուն նպատակը, հաճելի խօսքերով ու խոստումներով շայեց այդ երևոյթը.

—Աֆէրիմ, աֆէրիմ—ասաց նորին բարեծնողութիւնը—այդպէս միշտ աչքաց եղէք և Վեհ. Սուլթանին հլու ու հաւատարիմ հպատակ... եթէ Աստուած ինձ կեանք տայ, ձեր ցանկութեան համաձայն՝ այն նենգամիտ «գեղաւորներին կոտորելուց յետոյ, պէտք և ձեզ համար փայլուն շքանշաններ բերել տամ Կ. Պոլսից...

—Ծառայ եմ—ընդհատեց քահանան—մէջտեղում հաց էլ կայ. հարուստ է վանքը, հարուստ են և «խէյանաթները» (անհաւատարիմ)...

—Հասկանում եմ, քէշիշ, հասկնում եմ. մենք ձեռ՝ ձեռի տուած պիտի աշխատենք. հացից մի պատառ էլ անշուշտ ձեզ կը հասնի...—խորհրդաւոր կերպով վրայ բերեց երկրի պտոը և պահանջեց, որ մուխտիրները իրենց պատմութիւնը կրկնեն «Մէճլիսի» (ժողով) առաջ և ստորագրեն այդ առիթի կազմուած ընդարձակ արձանագրութեանը։ Դաւաճանները ստորագրութեամբ խոստացան իրենց ցուցումները փաստերով և վկաներով ապացուցանել։

Ե.

Մշու «միւթէսարիֆի» (գաւառապետ) վերուն հեռագիրը Հայկական շարժման առթիւ, որ հիմնուած էր Բուլանըխի գայմագամ՝ Հաշիմ-բէկի ծանուցագրի վրայ, ահագին աղմուկ և շշունչ հանեց Կ. Պոլսի վարչական շրջանում. Բ. Դրան իրաւանցումը իւր զօրեղ ազդեցութիւնն ունեցաւ «Եէլդզի — Քէօսկում»... հրահանգուեցաւ Մշու փաշային անմիջապէս ձերբակալել յանցաւորներին և ուղարկել Կ. Պոլիս։ Նախ՝ Կոփպ «Հուրմաթի» և ապա՝ Մշու բանտերում ձերբակալուեցին Սիմէօն վարդապետը, Համզաշեխի՝ Տէր-Խորայէլ քահանան, Հոզոյի Արէ Թմօն և ուրիշ 10-12 մարդիկ Համզաշեխ գիւղից և 3 ուսուցիչներ, որոնք սակայն անհանգիստ թախանձում էին թողացնել իրենց վրայ բարդուած յանցանքը կամ անհաւատարմութիւնը և ըստ այնմ դատել ու հալածել...

Մշու փաշան կատարեց նաև ձևական քննութիւնը — «Ալէյի-մխկամայ» արեց, կոչեց անուանի մուխտիրներին՝ Տէր-Գէորգին, Ջուլկի տղայ Գէորին, Ռշոյի Մխիթարին, որոնցից երկու առաջինների ցուցումների ճշմարտութիւնը՝ ձեռքերը սրտերին դրած՝ վկայեցին. մնացեալ երկուսը, ըստ տրամադրութեան օրինաց, քննողական գործում երևացին բողոքաւոր և վկաներ...

Արուեստական կամ մտացածին քննութեան հետևանքն եղաւ յանցաւորը ճանաչել Սիմէօն վարդապետին, Տէր-Խորայէլին և Համզաշեխցի 10-12 բանտարկեալներին, որոնք միամսեայ արգելանքից յետոյ, ծանր կապանքների մէջ, առանձին պահնակով փոխադրուեցին Կ. Պոլիս, ուր և որոշուեցաւ նրանց վիճակը՝ Սիմէօն վարդապետին, Տէր Խորայէլին և 8 հոգի Համզաշեխցիներից անորոշ ժամանակով աքսոր ուղարկեցին «Հադա», մնացեալներին Զամբրիապոլիս, իսկ Արէի տղայ Թմօն վախճանուեցաւ Կ. Պոլսի բանտում։

Մշու միւթէսարիֆի կարգադրութիւնների և ձերբակալութիւնների հետ զուգընթացարար կատարւում էր և Բիթլիսի վալի փաշայի կողմից ուղարկուած հազարապետ (բին-բաշի) քննչի հարց ու փորձը նոյն վիճակում։ Քննիչը շրջագայում էր 15 զապթիաներով։ Նա Կոփ գիւղում իջևանեց Ղազարի «օտան», կոչեց իր մօտ մուխտիրներին՝ Խչէի-Մելիքի տղայ Մխիթարին և Համզաշեխցի Ռշոյի տղայ Մխիթարին, որոնք յանանէ - անուանէ ցոյց տուին իրբև յեղափոխականութեան պարագլուխների Մշում. 1, Գոնչոյեան Մելիքին (նոյն և Մշեցի Նալպանդ), որին զինուորական քննիչը փայտի ծանր հարուածների տակ՝ անշընչացնել տուեց. դաւաճանները մինչև ոտները սրտերին դրած՝ վկայեցին. մնացեալ երկուսը, ըստ տրամադրութեան օրինաց, դաւաճանի դերում կանգնած էին աշակերտները և աշակերտուհիները իրենց ուսուցիչներով, հոգաբարձուներով։ Վեհափառը անցաւ աշակերտների միջով կանաչ խոտի վրայով և բազմեցաւ իրեն համար պատրաստած աթոռի վրայ։ Աւագ ուսուցիչը մի կարճ ճառ կարդաց։ Հայրիկն այստեղ ևս չդադարեցաւ մի քանի բոպէ խօսելու, գլխաւորապէս կրթութեան վրայ. այստեղ ևս ժողովուրդին յորդորեց որ իրենց վերջին կոպէկն անգամ չխնայեն իրենց որդոց կրթութեան համար։

Հայրիկը օրհնեց աշակերտներին, աշակերտուհիներին, և ուսուցիչներին և ասաց այս խօսքերը.

«Քաղաքում եղած ժամանակս ինձ տկար էի զգում, զալով այս գիւղն, բոլորովին առողջացայ։ Ես շատ մրխիթարուած եմ. կը հեռանամ ձեզնից գոհ և ուրախ սրտով, շատ շնորհակալ եմ բոլոր հասարակութիւնից»։

Վեհափառ Հայրիկը դուրս եկաւ։ Երգեցիկ խումբը հետևելով հայոց Հայրիկին, երգեց «Հայրիկ, Հայրիկ» երգը և այդպէս երգելով Նորան տարան մինչև կառքը։ Կեցցէներին չափ ու սահման չկար, ժողովուրդը սոսկալի յափշտակուած հետևում էր կառքին և կեցցէներ ազազակում։ Մէկ ժամից յետոյ, սկըսուեցաւ ժողովուրդի ընդունելութիւնը։

Ճաշից յետոյ, Վեհափառ Հայրիկի կարգադրութեամբ պատրաստութիւն տեսան մեկնելու գիւղից։

Ժամի 3-ն էր, արդէն կառքը պատրաստ էր. 50-ի չափ ձիաւորներ ժողովուած էին. հայոց Հայրիկին պէտք է տանէին մինչև Նոր-Նախիջևան. ամեն ինչ պատրաստ էր, սպասում էին Վեհափառ Հայրիկին. վերջապէս երևեցաւ պաքնեհասակ, արծուագէմ, և անսահման բարութեան պատկեր կրող Հայրիկը. հազարաւոր բերաններ, միանգամից կեցցէներով թնդացրին օդը։ Վեհափառը խաչակնքեց, օրհնեց Իրեն բարի ճանապարհ մաղթող բազմութեանը և տուեց Իւր մնաս բարեաւի ողջոյնը և կառքը նստելով հեռացաւ։

Ձիաւորներով շրջապատած, հեռացաւ գնաց Վեհափառ Հայրիկը, մեր պաշտելի ժամանակաւոր Մեծ Հիւրը, Ազգիս սիրելեալ Վեհափառ Կաթողիկոսը։

Այո, Հայրիկը գնաց, բայց Նորա քաղցրահնչիւն «Հայրիկ» անունը, Նորա անմոռան խօսքերը, Նորա սուրբ դէմքը այնպիսի մի խոր տպաւորութիւն թողին մեզ վրայ, որ դարեր կանցնին, Մեծ-Սալայի հասարակութիւնը չի մոռանալ՝ որդէց որդի պատմելով։ Մեծ-Սալան հիմնարկութեան օրից ի վեր չէ տեսել այսպիսի Մեծ Հիւր, ինչպէս Հայոց Հայրիկը. և յոյս էլ չունենայ թէ երբ և ինչ է կարող է տեսնել։

Քեռավաղցի։

17 Ապրիլի. 1895 թ.
Մեծ-Սալա։

* * *

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են թէ Ենիսեյրուութիւն կայ Կովկասում վերջացնել ծխահարկը և մտցնել հարկահաւաքութեան մի այլ ձև, որ աւելի է համապատասխանում տեղական պայմաններին։

* * *

Ենիսեյրուութիւն կայ Կովկասում իւրաքանչիւր նահանգում բանալ մի այսպէս օրէնք գալ։ Բայի գրանից ծրագրուած է Թիֆլիզում բանալ մի գինեգործական գպրոց և մի գիւղատնտեսական-այգեգործական սեմինարիա վերոյշեալ գպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։

* * *

Կովկասեան երկաթուղու դէմ վրայ, Բագուի Նահանգում աւազակութիւնները եւ սպանութիւնները դեռ չեն դադարում։ Ուշարի, Քիւրդամիր և մէս գրանց մօտիկ կայարաններում երկաթուղու գնացքի վրայ հսկում են տեղական գիւղացիներից կազմած պահապանների խմբեր, որոնք այնքան վատ են զինուած, որ հազիւ թէ կարողանան դիմադրել աւազակների յարձակման։ Չնայելով այդ պահապան խմբերին այնու ամենայնիւ փախստական աւազակները իրենց գործը տեսնում են։ Ինչպէս գրում են Ուշարի կայարանից, «Նով. Օր.»-ին, ապրելի 18-ի գիշերը պախստական աւազակները սպանել են Կազման գիւղի տանուտէրին։ Կազման են եկել 150 կօղակ և ձերբակալել են մի քանիսին, որոնց կասկածում են իբրև տանուտէրի սպանողներ։

* * *

Երկրագործական և պետական կալուածների նախարարութիւնը պետական խորհրդին նոր ծրագիր է ներկայացրել Կովկասեան հանքային ջրերի կառավարութեան վերաբերութեամբ։ Այդ ծրագրով ոչնչացնվում է կառավարչական կոմիսարի պաշտօնը և սահմանվում է տեսչի պաշտօն, որին պիտի աջակցեն տեղական բժիշկները։

* * *

Քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական տեսանը իր ամսոյս 22-ի նիստում որոշեց հաստատել Թիֆլիզի քաղաքային խորհրդի՝ հանդուցեալ քաղաքագլուխ Իգմայլեանի այրիին նշանակած տարեկան 1600 ռուբլի և սրդուն 800 ռուբլի թոշակը։ Հանդուցեալս մօրը յատկացրած տարեկան 600 ռ. թոշակը տեսանը անվաւեր համարեց։

* * *

Ստացանք „Собраніе стихотвореній Виктора Гюго, въ переводахъ русскихъ писателей, подъ редакціей И. Ф. Тхоржевскаго, выпускъ I“. Այդ առաջին տետրակն է, որ հրատարակում է Պ. Ցիսրժեվսկին և ինչպէս յայտնում է դեռ պիտի հրատարակէ 15-ից մինչև 20 տետրակ։ Պարոն Ի. Ցիսրժեվսկին Կովկասեան ռուս գրականութեան մէջ արդէն վաղուց յայտնի է և յարգուած իբրև քաջ ռուս հրապարակախօս, իբրև բանաստեղծ և թարգմանիչ։ Նրա հրատարակութեամբ է լոյս տեսել ռուս լեզուով նշանաւոր Ֆրանսիական ժողովրդական բանաստեղծ Բերանժէի ստանաւորների լիակատար ժողովածուն։ Վիկտոր-Հիւգոյի ստանաւորների թարգմանութեան լեզուն սահուն է և գեղեցիկ. իւրաքանչիւր տետրակի գինն է 20 կոպէկ։

* * *

Ռուս գիրասանական խումբն ամսոյս 21-ին յաջողութեամբ ներկայացրեց մեր տաղանդաւոր դրամատուրգ Ա. Սունդուկեանցի «Ամուսիններ» կոմեդիան։ Հետևեալ անգամ մենք կը տանք ընթերցողներին այդ ներկայացման հաշիւը։

* * *

Ո՞վ կարող էր երևակայել, թէ մանուկների համար այնպիսի խաղալիքներ են պատրաստվում՝, որոնք մահ կարող են պատճառել, բայց այդպիսի խաղալիքներ ծախվում են Թիֆլիզի խանութներում. դրանք փոքր սաբրճանակներ են «Մօնտէ-Կրիստոյի» սիստեմով և լցնվում են փամփուշտով և զընդակով։ Այդ փոքրիկ սարճանակներից շատերը գնում են և նուիրում երեխաներին։ բայց ահա թէ ինչ ծանր հետևանքներ է ունենում այդպիսի խաղալիքների բանացնելը. ապրելի 20-ին շաբաթ օրը Աւրաժեան փողոցի վրայ ատուսական որդի Վլադիմիր Պարեսովը իր 14 տարեկան ընկեր Վլադիմիր Ցուխարելիի հետ խաղալու ժամանակ ձերքին ունէր այդ խաղալիք - սարճանակը։ Պարեսովը սարճանակը արձակեց և զընդակը ծածկելով Ցուխարելիի ձախ կողքը ուղղակի մտաւ խեղճ երեխայի սիրտը. վիրաւորուած երեխան հազիւ կարողացաւ մինչև տուն վազել և այդտեղ մի քանի բոպէից յետոյ վախճանուեց թշուառ ծնողների աչքի առաջ, որոնք կորցրին իրենց միակ զաւակին։

Անհրաժեշտ է որ իշխանութիւնն անպայման արգելէ այդպիսի վտանգաւոր խաղալիքների վաճառումը։

* * *

«Մշակ» լրագիրը նոր օրէ

կամ որ և է պաշտօն ստանայ, պաշտօնական օրգան «Кавказъ» լրագիրը կարող է շտապցնել այդ մասին. այն հիման վրայ, որ այդ լրագրի խմբագրին, կամ որ և է աշխատակցին ստելի է մնռնող կամ պաշտօն ստացող անձը։ Գիտէք թէ այդպիսի մի քայլի համար (!!!) ինչ պատասխանատուութեան կենթարկեն (!!!) այն պաշտօնական օրգանի խմբագրին, որ իրեն թոյլ կը տար (!) մի այդպիսի յանդգնութիւն...» Въ Сенатъ подамъ, Министру, Государю (!).

Այդ բաւական չէ, լսեցէք վերջն ինչ է ասում «Մշակը».

«Բայց «Արարատի» երեկայ խմբագրողները իրենց թոյլ են տալիս այդպիսի խաղեր Էջմիածնի պաշտօնական օրգանի հետ եւ յոյս ունին թէ անպատիժ կը մնան. . .

Կարդացէք և հասկացէք։ սա այն «Մշակն» է, որ յայտնի է իր խաղերով ամենապատկառելի անձանց դէմ և այժմ ոտիկան է կանչում Ս. Էջմիածնի դէմ։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՈՒԼԱՆԽ, Ապրիլ 3.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Սորանից հինգ օր առաջ կուսակալի կոչնագրով Բաղէշ գնացող Լիզ գիւղի յայտնի Լեոն վարժապետը այստեղ վերադարձաւ։

Անցեալ աշնանը երբ յատուկ Թոնսիմ փաշայի խորհրդովն ու հրամանով գաւառիս զայմազամական տեղապահ Խալիլ էֆէնտին ժուռ գալու ելաւ գաւառիս մէջ՝ հայ ուխտարներ խուզելու համար, ի միջի այլ տասնեակ անձինքների խուզելու վիճակին ենթարկուցաւ նաև այդ քրտնաջան ուսուցիչը։ Չնայած պ. Լեոնի ազաչանք-պաղատանքներին, գարձեալ զրաւական ու կալուածական աճուրդի գնով պարտաւորուեցաւ՝ յանուն «խոտվէ փարատու» վճարել բարբարոս կուսակալի ներկայացուցչին ուղիղ 150 օսմանեան ոսկի։

Այս ժամանակներն էր, որ Թոնսիմ փաշայի մանկլաւիկները, յատուկ նոցա խորհուրդով կը շրջէին հայաբնակ վայրեր, կը տեսնէին Թոնսիմի տաքթարի մէջ ցուցակագրած աչքի զարկող անձնաւորութեանց և մի կերպ նոցա կը հասկացնէին՝ կամ մի չոչափելի դումար վճարել կամ թէ ընդունել «յեղափոխական» կամ «ֆէսատ» անուն։

Այս երկու բառերի առաջ տրէին ամեն ինչ կանգ կառնուր։ - «Լաւ էր օրուայ հացին կարօտ մուրացիկ դառնալ՝ քան լինել «յեղափոխական» և «ֆէսատ» և ենթարկուել մըտացածին տանջանքների, աքսորի, կալանքի», սոսկումով կը մտածէր իւրաքանչիւր անհատ, որ գրժբախտութիւն կունենար լսելու իւր անուան կարգացած դատավճիռ։

Երբ պ. Լեոնը վճարեց Խալիլ էֆէնտուն 150 օսմանեան ոսկին մի նախամտածեալ խորհրդով յանուն բարեկամութեան՝ մի փուռալա (տոմսակ) խնդրեց նորանից այս բովանդակութեամբ. «Ես իմ քիրվա Լեոն վարժապետից ստացայ (ի հարկէ առանց պատճառը յայտնելու) 150 օսմանեան ոսկի։ Այս անձնաւորութիւնը Թոնսիմ փաշայի և իմ մտերիմ բարեկամն է, կը զգուշացնեմ բոլոր յանորդները»։ Պ. Լեոնը ստանալով 150 օսմանեան ոսկու գրաւական երկտող տոմսակը մասամբ ինքն իրան մխիթարուած զգաց այդ անիրաւ տուգանքի առաջ։ Այդ դէպքից ուղիղ երկու շաբաթ անցած էր, երբ Խալիլ-բէյ կատարելով իւր արշաւանքը գնացած էր Բաղէշ իւր անարգ պետին համար ու հաշիւ տալու՝ իւր շրջագայութեան համար և վերստին վերադարձած գաւառս։ Նա գալուն անմիջապէս յետ պահանջեց պ. Լեոնից իւր ձեռագիր տոմսակը։ Պ. Լեոնը առարկեց որ տոմսակը՝ ստանալու բոպէին՝ կտոր-կտոր է արեր։ «Ես, ուելացրեց նա, ձեր առ իս ունեցած ապագայ անկեղծ բարեկամութիւնը փորձելու համար խընդրեցի այդ երկտող տոմսակը։ Եւ երբ տեսի, որ զուք առանց տատանուելու ու երկմտութեան շնորհեցիք խնդրածս, այնուհետև վստահեցայ ձեր վրայ և պատուեցի նորան»։

Խալիլ էֆէնտին միամտեցաւ և նոյն միամտութեան քնով օրօրեց իւր պետ Թոնսիմ փաշային։

Բաղդի բերմամբ երբ անարգանօք պաշտօնանկ եղաւ կաշառակեր Թոնսիմ փաշան և միևնոյն ժամանակ վրահասաւ եւրոպական Քննիչ Յանձնաժողովը, պ. Լեոնը անմիջապէս գիմեց Բաղէշ և նորընտիր կուսակալ Միւնիր փաշային ներփակեալ Խալիլ-բէյից առած ստորագրով մի բողոք-ադերսագիր ներկայացրեց ընդդէմ Խալիլ - բէյին և արդարութիւն պահանջեց 150 օսմանեան ոսկու անարգարութեամբ հատուցուելուն, իսկ հակառակ պարագային պատրաստ է անդամ գիմել Մուշ գտնուող եւրոպական Քննիչ Յանձնաժողովին։

Չնայած Խալիլ-բէյի այն առարկութեանց, թէ այդ գումարը, որքան որ իւր ստորագրութիւնը կը կրէ, այնուամենայնիւ իւր ժամանակին յանձնուած է Թոնսիմ փաշային, սակայն եւրոպական Քննիչ Յանձնաժողովի մատենաց մէջ կաշառակերութեանց մի փաստ ևս չաւելացնելու խոհեմութեամբ՝ պատժելու սպառնալեօք հարկադրեց Խալիլ-բէյին, որ և մահուան տագնապով, Միւնիր փաշայի ներկայութեամբ, համրեց պ. Լեոնի բռի մէջ 150 օսմանեան գեղին կլորիկ ոսկիները։

Գաւառիս գարձեալ մի քանի բողոքարկու հայեր գնացին Մուշ Քննիչ Յանձնաժողովին ներկայանալու և իրանց դարդը պատմելու նոցա։

Նորա բոլորեքեանք ունէին իրանց համար պատրաստած բողոք-ադերսագրեր։ Այդ բողոք-ադերսագրերի մեծագոյն մասը կազմուած էր ուղղակի տեղական բարբառով։ Ահա նոցանից մի քանի կտորներ.

«Թամօ-Բշար ազան սրհաթ 5-ին բռնեց մըր գեղի վրէն (Խօժկիլտի) և խաղար խինդ խարիւբ գլուխ ոշխար, եղմիշ գումշեվէն, քսան ձի, տըսն ուլմ էշ, յեսսուն ու խինդ կով առաւ ու գնաց թըրս (դէպի) Թեղուտ, ու էնտեղէն լէ ուլմ կօսի գնջիներով (մօտ 35 արջառ), երեք խարիւբ եզ ու կով, մատակ ու ձագ խլելով ջանդմաւ»։

«Թօփալ Աֆէ ազան աշուն տասվերկու մալ (անասուն) բերեց մըր գեղ (Խօմանլու) ու զօռով, անհաս ու անբան տըվեց պահել։ Ցաւ ընկաւ. գեղացոց մալ պլեթուն լէ փիցուց. ցաւ գրըթու մալ լէ փիցուց, մինակ մատակ մը թողեց սակ։ Գարուն Աֆէն եկաւ, զօր գրեց գեղի վըրէն և քանուեբկու մալ ժողվեց ու տարաւ. պըլէլը զմատակ չտարաւ։ Թողեց որ ծնի, չունի յալ էր։ Մատակը նիսան (ապրիլ) ամսի մէջ ծնաւ էգ ձագ մը։ Մատկու պահող Մխէն առաւ զմատակն ու զձագ և տարաւ ու թահսիլմ ըրեց քրթուն։ Ամիս մը ընցաւ էտ արալը։ Մէկ լէ տեսանք Աֆէն եկաւ ու խեղճ Մխէին ըսաւ. «Գաւ լէ գինաս, որ զիմ մալ պահող գեղացիքը մէկին երկու ըրէնու տըվին, տեսնանք դու ինչ կիտաս»։ Պահողն ըսաւ, ես ախբը զմատակն ու ձագ սաղ թահսիլմ ըրեր եմ քըզի։ Աֆէն շըլթաղ (զրպարտանք) թալեց ու ըսաւ. «Զիմ մատկու ախուէր պլեթուն լէ քալպաթով տեղէն խըվըլցուցեր էք ու քաշեր։ Ըտրա հավը կենէ ոսկի մը, ամմու մը շալ, խանտ մը շաբար, լիպը մը ձէթ, խինդ բեռ լէ ցորեն»։ Զըս ըմէն լէ առաւ ու գնաց։

«Ռըզախ ազան սրհաթ 12-ին, բռնեց մըր գիւղի (Խամանլու) վըրէն, կոտրեց Սարգսի տան դուռ, մացուց գիւր եօթ խուլամ տան նեքսև։ Ըսրանք շատ նեղութիւն արվին Սարգսին և շատ լէ ծեծին, զընդրա...գրին երկու փէտի մէջ, սխմին ու պատուեցին և շատ չէչիթ սոսրայներ հանին գլուխ. յերեսուն ու հինգ ոսկի առան. քսան ու խինդ ոսկու էլ մալ ու ապրանք տարան։ Սարգիս երեք ամիս եայժախ ընկաւ, յետոյ երբ Աստծու ողորմութեամբ եկաւ, առաւ գիւր տուն ու տեղ և գնաց Խամամբոլ...

«Ռըզախ ազէն կէս գիշերին խըրկեց գիրան մշակ մըր գեղ (Խամէկ) Բերդեցի Մարգարի մօտ. մշակն ըսաւ. Մարգարայ, Ռըզախ կըսէ. էս գիշեր թըզ առնէ գիր պղտի խարս ու յիգայ թըրս ինձ։ Մարգարէն ըսաւ մշկուն, էդ բան չեղնալու բան է. մշակ դարձաւ յետ էս բան ըսաւ ազին։ Ըսհեղ Ռըզախն առաւ իրան խեռ գիր երեք մշակ գիշերով ու եկաւ բռնեց Մարգարի տան վրէն, կապեց չվանով, խարիւբ փէտ գարկեց, իրան կամք կատարեց խարսի խեռ. վերջ լէ քառասուն ոչխար մէկ հեղ, յեսուն ու խինդ բարդ ցորեն լէ ուրիշ հեղ մը գոռով առաւ ու գընաց։ Մարգարէն փախաւ գեղէն։

«Դեկտեմբեր 8-ին Ռըզախ բռնեց մըր գեղի (Իկնախոջի) իրիցու տըվին ծեծեց, յեսուն ու խինդ օսմանցու ոսկի առաւ։ Եօթն օր մնաց տղէն մեռաւ։

«Էմլէ Ռըզախ մէկ մօտր (կնիք) մը տըվեց մըր գեղի (Իկնախոջի) վարժապետին փորել։ Գարագի Բեսոյ անունով սանատ մը շինեց սաքսան ոսկու և առաւ Բեսոյէն։ Մօտր փորող վարժապետ լէ հըմկայ տաճիկ է եղեր՝ սպիտակ կտաւ մը գլուխ փաթաթելով։ Գիշերը բռնեց Ապաչու Մուրատի տան վրէն և գՄուրատի ազատ աղջիկն փոխմիշ էրեց։ Միւս գիշեր բռնեց Յակոբի տան վրէն և ըս հեղ Յակոբի հարսի մօտ գնաց», եայն եայն...

Պուլանըխցի։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ապրիլի 21-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Բոստովի (Դոնի վրայ) և Տաղանրօգի մէջ շինուած է կառավարական տելեֆոն։

Զորեքշաբթի օրը Ալեքսանդր III-ի հոգեհանգստին Պետրոպավլովսկի տաճարում ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին Մարիա Թէոդրովնան, Մեծ իշխաններ և Մեծ իշխանուհիք։ Հոգեհանգստից յետոյ Նոցին Մեծութիւնները զբնացին Անիչկով պալատը։

ՄՈՍԿՈՒԱ.—Մի անյայտ բարերարուհի ուղարկել է Մոսկուայի համալսարանին 4000 ռուբլի, որպէս զի այդ գումարով չքաւոր ուսանողների ուսման վարձը վճարուի։

ԼՕՆԴՕՆ.—(Ռէյտէր) Պէկինից հաղորդում են թէ չինական կառավարութիւնը դեռ ոչինչ չէ վճռել Սիմօնօսէկի դաշնադրութեան ստորագրութեան վերաբերմամբ։ Լի-Հունդ-Չանգին ընդունեց Բոգդիխանը։

ՓԱՐԻԶ.—«Matin» լրագիրը հաստատում է իբր թէ ճապոնացոց կառավարութիւնը պատրաստ է բանակցել Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ արևելեան-ասիական հարցը խաղաղութեամբ վճռելու համար։

Խմբագիր հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒՈՒՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻՆՕՂԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԷՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՍՕՐՕՏԿԻՆԱ—ՀՀԵՐԻՒՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ, ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-լաբորատուական հետազօտութիւն է անում մէզի, խեթի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումն ընդունվում են և դիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒՍՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

—

Բացի գեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱՐԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱՐԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

—

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյան { աղամարդիկ

—

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնաժ անող կին և մասաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում՝ դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում՝ դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանք-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանք-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

—

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական Ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Վեհ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ԹԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՐ
գինն է 15 կոպ.
Դիմել Կենդրոնական գրավաճառանոց։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇՀԵՐԲԻՆԻՆԱ.

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 11½ ժամից մինչև 1-ը և երեկոյեան 6—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ տուն Ելիսովի։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԲՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.
Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 22,000,000 ՌՈՒԲԼԻ
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում.

Ընկերութիւնն ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն գրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1894 թուի յունվարի 1-ին «ԲՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի գրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԻՐԲԱՂ ԳԻԳԱՔԵՐԻՑ

առանձին անձինքների, նոյպէս և համագումար ապահովագրութիւններ. գործարաններում՝ ծառայողների եւ բանուորների,—պակասացնելով ապահովագրական վճարները, գիվիդենտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն)։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութիւնը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապա հովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—19)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ. ՉԻՖԵՐՏԻ
(№ 7, Դվորցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՋԷԹՔԵՐ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱԼԷՔՕՓԵԹԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂԱՍԿԵՐԻՑ, ԿԱՇՈՒՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ

(150—125)

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ Ընկերութեան կանոնագրութեան § 31 համաձայն, ապրիլի 30-ին, կիւրակի, երեկոյեան ժամի 7½-ին, Թիֆլիզի քաղաքային դումայի գահլիճում նշանակուած է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

որի պարապմունքի առարկաներն են՝

ա) Տեղեկագրի, հաշուի և նախահաշուի ընթերցումը և հաստատումը։

բ) Պաշտօնատար անձերի ընտրութիւնը. վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, մի անդամի, գրագահի և խմբագրական մասնաժողովի երեք անդամների։

Վարչութիւնն ընդ սմին հարկ է համարում յայտարարել, որ վարչական վերջին. նիստը նշանակուած է ապրիլի 29, շաբաթ օր, երեկոյեան, և մինչև այդ նիստը միայն կը լինի այն նոր անդամների ընդունելութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին։

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիրը ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը—Բարեատինսկայա փողոց, տուն Դեղեվանովայի, սկսած ամսիս 24-ից։ (1—1)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ այսու յայտնում է ընդհանրութեան, որ սլ. նահանգապետը սոյն 1895 թուի ապրիլի 13-ին վաւերացրել է, որ երկաթուղու կայարանից կառքով մինչև քաղաք գալու համար պէտք է վճարել 60 կոպէկ, փոխանակ առաջուան 75 կոպէկի։ (4—1)

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

անունով ազգային լիակատար երգարանի առաջին հատորը հրատարակելու համար։ Այս հատորի մէջ, բացի բոլոր գործածական և ժողովրդին յայտնի երգերից, տպագրվում են նոյնպէս և նոր երգեր, և բանաստեղծութիւններ, և երգերին վերաբերեալ արձակ զրուածքներ, թուով 300-ից աւելի։

Հնայելով գրքի մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինը նշանակում ենք, կանխիկ վճարող բաժանորդների համար, մի ռուբլի։

Ստորագրագրքի ցանկացողները թող բարեհաճեն դիմել՝ Բագու, «ՍՈԽԱԿԻ» հրատարակչին՝ այս հասցէով. Священнику Григорію Григоріанцъ, въ Баку.

Հրատարակիչ՝ Գրիգոր քահ. Գրիգորեանց։ 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՈՆ
ՕՔՍ ՏԷՔ-ՑՈՒՑԱՍԷՓԵԱՆՑ
Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է. Սօլօլակ, Սադովայա փողոց № 46 (Սերգիևսկի փողոցի դիմացը)։ (5—6)

Дозволено цензурою, Тифлисъ 22-го Апрѣля, 1895 года. Տպարան Մ. Նալբանդեանցի և Ընկ. Типографія М. Мартиросіанца, и К°. На Михайловской ул., № 81.